392

...ԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ԾՐԱԳԻՐ
# ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

9(Ս).04
Ծ- 98

...ԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1939

.05.2013
392
30 MAY 2011
02 JUL 2005
6186
39
9(ա)«04»
Ծ-98

*Հաստատված է ԽՍՀՄ-ի ԺԿԽ-ին կից բարձրագույն դպրոցի գործերի համամիութենական կոմիտեի կողմից 1 հուլիսի 1939 թ.*

# ԾՐԱԳԻՐ

# ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

*Ընդհանուր հասկացողություն միջին դարերի պատմության մասին։ «Միջին դարեր» տերմինի պատմությունը։ Արտադրության ֆեոդալական յեղանակի բնութագիրը։ Մարքսը, Էնգելսը, Լենինը, Ստալինը արտադրության ֆեոդալական յեղանակի մասին։ Միջնադարյան հասարակության զարգացման ժամանակագրական շրջանակներն ու հիմնական աստիճանները։*

## ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

## ԱՐԵՎՄՏՅԱՆ ՅԵՎՐՈՊԱՆ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ (V—XI ԴԱՐԵՐ)

### 1. Հռոմեական կայսրությունը III—V դարերում

*Հողային խոշոր սեփականության աճումը։ Սենատորական խոշոր հողատիրության տիրապետությունը։ Արտադրության ստրկատիրական յեղանակի քայքայումը։ Կոլոնատի և մասնավոր իշխանության զարգացումը։ Առևտրի և քաղաքների անկման սկիզբը։ Դեկուրիոնների և կոլլեգիաների ճորտացումը։ Նատուրալ տնտեսության զարգացումը։ Պետական կարգերը։ Դիոկղետիանոսի և Կոստանդինի ռեֆորմները։ Կայսրության մասնատումը Արևմտյանի և Արևելյանի։ Քրիստոնեական յեկեղեցին։ Նրա սոցիալական ու քաղաքական դերը։ Ստրուկների ու կոլոնների հեղափոխական շարժումը։ Կայսրության անկումը։ Էնգելսը և Ստալինը Հռոմեական կայսրության անկման մասին։*

## 2. Հին կելտերը, գերմանացիները յեվ սլավոնները

Կելտերը, նրանց նախապատմությունը: Իռլանդիայի ու Բրիտանիայի կելտերը: Գալլիայի ու Իսպանիայի կելտերը: Կելտերի հասարակական զարգացումը մինչհռոմեական և հռոմեական դարաշրջանում:

Հին գերմանացիների պատմության ուսումնասիրելու հիմնական աղբյուրները: Հին գերմանացիների բնակության մարզը:

Գերմանացիները Կեսարի դարաշրջանից հետո՝ տոհմային կարգեր, հողագործության և անասնապահության զարգացման մակարդակը, ցեղային կազմակերպությունը:

Տակիտոսի դարաշրջանի գերմանացիները: Նստակեցության ու հողագործության հետագա զարգացումը: Տոհմային համայնք. տոհմային ազնվականությունը: Դասակարգային շերտավորման սկիզբը. ստրկատիրությունն ու նրա առանձնահատկությունները գերմանացիների մոտ: Դրուժինաները: Ժողովրդական ժողովը և ավագների խորհուրդը: Թագավորական իշխանության բնույթը: Ցեղային միության և ցեղերի միությունների անկայունությունը: Հին գերմանացիների կրոնը:

Գերմանացիների առաջին ընդհարումները հռոմեացիների հետ (կիմբրներ և տևտոններ): Արիովիստ, Արմինիուս: Հռոմեական պատնեշը: Սահմանային հարաբերությունները: Գերմանացիների մուտքը կայսրության մեջ որպես ստրուկներ, կոլոններ, զինվորական շինականներ: Գերմանացիները զորքի և վարչության մեջ: Գերմանական ապստամբությունները (Ցիվիլիս):

Գերմանացիների վերաբերյալ բուրժուական պատմագրության քննադատությունը (Ֆյուստել-դե-Կուլանժ, Դոպշ, Պետրուշևսկի և ուրիշները): Հին գերմանացիների պատմության ֆաշիստական ֆալսիֆիկացիայի մերկացումը:

Հին սլավոնները, նրանց տարածումը: Սլավոնների հասարակական կարգերը, նրանց կուլտուրան:



## 3. Բարբարոսների նվաճումները յեվ ստրուկների հեղափոխությունը: Բարբարոսական պետությունների կազմվելը հռոմեական տերիտորիայում

Արևելյան-գերմանական ցեղերի նյութական կուլտուրայի վերելքը III—IV դարերում: Արևելյան գերմանացիների գաղթը: Մերձսևծովյա գոթերը: Ուլֆիլա: Գոթերի արիոսականությունը: Հոնների արշավանքը: Վեստ-գոթերի թափանցումը հռոմեական կայսրության մեջ և նրանց ապստամբությունները: Ալարիխը: Գերմանական նվաճումների կապը ստրուկների ու կոլոնների հեղափոխական շարժման հետ: Վեստ-գոթերի պետության հիմնվելը Հարավային Գալլիայում և Իսպանիայում: Գոթերի ռոմանիզացիան: Սոցիալական պայքարը գոթական պետության մեջ արաբական նվաճման նախօրյակին: Վանդալների նվաճումները Աֆրիկայում: Վանդալները, սվևերները և ալանները Իսպանիայում:

Բուրգունդների՝ հարավ-արևելյան Գալլիայում բնակություն հաստատելը և բուրգունդական թագավորության կազմվելը: Հոնական պետությունը Արևմտյան Յեվրոպայում: Ատտիլը և նրա նվաճումները: Հոնների պետության կազմալուծումը:

Կայսերական իշխանության անկումն Արևմուտքում: Օդոակր: Օստ-գոթերի պետությունն Իտալիայում: Թեոդորիքը և նրա քաղաքականությունը: Թեոդորիքի եդիկտը: Օստ-գոթերի հասարակական կարգերը և նրանց «ռոմանացումը»: Քաղաքացիական պատերազմը և Բյուզանդիայի տիրապետության վերականգնումն Իտալիայում: Խոշոր հողատերերի ռեակցիան և պրագմատիկական սանկցիան: Լանգոբարդական նվաճումը:

## 4. Մերովինգների Ֆրանկական պետությունը

Կելտա-ռոմանական Գալլիան: Ֆրանկների առաջին բնակությունը Գալլիայում: Ֆրանկների կողմից Գալլիայի նվաճումը և ֆրանկների պետության կազմակերպումը: Խլոդվիկը և նրա հաջորդները: Ֆրանկների քրիստոնեությունը և նրանց թագավորների դաշինքը կաթոլիկ հոգևորականության հետ: Ներքին յերկպառակությունները:

Մերովինգյան հասարակության հասարակական կարգերը։ Սալիական օրենսգիրքը։ Ֆրանկների ազատ գյուղ-համայնքը և նրա քայքայման սկիզբը, տոհմային հարաբերությունների վերապրուկները։ Հողի մասնավոր սեփականության և խոշոր հողատիրության զարգացումը մանավանդ գալլո-ռոմանական Նեյստրիայում։ Ստրկատիրությունը։ Հողային կախման և մասնավոր իշխանության աճումը։ Յեկեղեցին և յեկեղեցական հողատիրությունը։ Թագավորական իշխանությունն ու պետական կառավարումը։ Մերովինգների իշխանության թուլացումը և մայորդոմների ուժեղանալը։ Պիպին Հերիստալցին։

## 5. Կարոլինգների Ֆրանկական կայսրության կազմվելը

Կարլ Մարտելլ և պայքար արաբների դեմ։ Ճակատամարտ Պուատյեյի մոտ։ Յեկեղեցական հողերի բռնագրավումը և ռազմական ռեֆորմը։ Կարլ Մարտելլի քաղաքականությունը Գերմանիայում։

Պիպին Կարճահասակը և թագավորական իշխանության գրավումը։ Դաշինք պապականության հետ և պայքար լանգոբարդների դեմ։ Պապական պետության առաջացումը։

Կարլոս Մեծի միապետությունը։ Ակվիտանիայի նվաճումը և պայքար արաբների դեմ Իսպանիայում։ Լանգոբարդների թագավորության նվաճումը։ Սաքսերի նվաճումը (Վիդուկինդ)։ Բավարիայի միացումը։ Պատերազմներ ավարների, սլավոնների, նորմանների դեմ։ Կայսրության վերականգնումը։ Կայսրությունն ու պապականությունը։ Հարաբերություններ Բյուզանդիայի և Բաղդադի խալիֆաթի հետ։ Դոպշի և Պիրեննի՝ Կարլոս Մեծի միապետության բնույթի ու նշանակության վերաբերյալ թեորիայի քննադատությունը։ Ֆաշիստական կեղծարարները Կարլոս Մեծի մասին։

## 6. Կարոլինգյան պետության ֆեոդալական կազմակերպությունը յեվ նրա տրոհումը

Ֆեոդալիզմի զարգացումը ֆրանկների մոտ։ Հողային և անձնական կախման աճումը (պրեկարիում, բենեֆիցիում, վասալիտետ, իմմունիտետ)։ Ֆրանկական կալվածը և այդ կալվածի ուսումնասիրության հիմնական աղբյուրները (պոլիպտիխոններ, կապիտուլյարներ, ֆորմուլաների և պարգևագրերի ժողովածուներ և այլն)։ Կալվածատիրական դաստակերտում և ճորտական գյուղը։ Սենյորի տնտեսությունը։ [illegible]ները։ Հողակալների հողաբաժինները և դրանց տեսակները։ Կոլոնները, լիտերը և սերվերը։ Հողակալների պարտավորությունները։ Արհեստը։ Բնատնտեսություն։ Կալվածքի կառավարումը։ Անտառների կտրատումը և գյուղատնտեսության տեխնիկական զարգացումը։ Գյուղացիական շարժումները։

Պետական կարգերը։ Ընդհանուր յերդումը և վասալիտետը, իմմունիտետի դերը։ Կառավարման կազմակերպումը, մագնատների ժողովները, կապիտուլյարները։ Կենտրոնական վարչությունը։ Կոմսերը և մարկգրաֆները։ Թագավորական դեսպանները։ Զինվորական կազմակերպությունը։ Դատարանի կազմակերպումը։ Հոգևորականության դերը կառավարման ապարատում։ Պալատական ակադեմիան։ Ալկուին։ Էյնգարդ։ Այսպես կոչված «Կարոլինգյան վերածնությունը»։

Կարոլինգների միապետության կազմալուծումը։ Լյուդովիկոս Բարեպաշտը։ Լյուդովիկոսի և նրա հաջորդների ժամանակաշրջանի խռովությունները։ Սաքսոնական գյուղացիների (Ստելլինգի) ապստամբությունը։ Վերդենի պայմանագիրը և Կարլոս Մեծի միապետության բաժանումը։

Ֆրանսիան վերջին Կարոլինգների օրոք։ Պայքար նորմանների դեմ։ Պաշտոնների ժառանգականության հաստատումը։ Թագավորական իշխանության անկումը և Ֆրանսիայի մասնատվելը։ Կարոլինգներն ու ռոբերտինները։ Հուգո Կապետը և Կապետինգների դինաստիայի սկիզբը։ Թագավորն ու ֆեոդալները։ Թագավորական դոմենի կազմակերպումը։ Խռովություններ թագավորական տիրապետությունների մեջ։

## 7. Անգլիան յեվ Սկանդինավիան

Մինչնորմանական Բրիտանիան և կելտերի հասարակական կարգերը։ Հռոմեական նվաճումը և Բրիտանիայի ռոմանացման պրոբլեմը։ Անգլո-սաքսոնական նվաճումը և անգլո-սաքսոնական պետությունների կազմվելը։ Անգլո-սաքսերի հասարակական

կառուցվածքը նվաճումներից հետո և ֆեոդալական հարաբերությունների զարգացումը: Ազատ գյուղը: Հարյուրակը: Կոմսությունը: Ֆեոդալական պետությունն ու նրա կազմակերպությունը: Վիտենագեմոտ: Անգլիայի միավորումը և պայքարը դանիացիների դեմ: Ալֆրեդ Մեծը: Կանուտի պետությունը: Էդուարդ Խոստովանողը:

Սկանդինավիայի նորմաններն ու վիկինգների արշավանքները: Առևտուրն ու թալանը: (Սոցիալական կարգերը): Ֆեոդալական հարաբերությունների սկիզբը: Նորմանների կողմից նոր պետությունների հիմնումը և աշխարհագրական հայտնագործումները: Իսլանդիայի ու Գրենլանդիայի գաղութացումը: «Վարյագների երկրից դեպի հույների երկիրը» տանող մեծ ճանապարհը: Նորմանդիայի, Սիցիլիայի և Հարավային Իտալիայի գրավումները: Նորմանների կենցաղն ու կրոնը:

## 8. Կայսրությունն ու պապականությունը IX—XI դարերում

Գերմանիան Կարլոս Մեծի միապետության քայքայումից հետո: Գերմանիայի IX—X դարերի ագրարային կարգերը: Ֆեոդալականացման պրոցեսի դանդաղ ընթացքը: Հերցոգների և եկեղեցու տիրապետությունները: Սաքսոնական դինաստիան: Սլավոններին հպատակեցնելու փորձը և պայքար ընդդեմ հունգարների: Սահմանամերձ մարկաները: Թագավորական իշխանության ուժեղանալը Օտտոն I-ի օրով: Օտտոնի տված արտոնությունները: Միջամտություն իտալական գործերին: Սրբազան Հռոմեական կայսրության վերականգնումը: Կայսրների դեպի Իտալիա կատարվող արշավանքների սկիզբը: Ֆրանկոնյան դինաստիայի կայսրները, նրանց քաղաքականությունը Գերմանիայում ու Իտալիայում: Իտալիայի զարգացումը IX—X դարերում: Պապական իշխանության աճումը:

## 9. Արևմտյան սլավոնները VI—IX դարերում

Արևմտյան սլավոնների պատմության հին ժամանակաշրջանի վերաբերյալ աղբյուրները: Սլավոնների տնտեսությունը՝ հողագործություն, անասնապահություն, որսորդություն, ձկնորսություն, առևտուր: Տոհմային կարգերը: Գույքային շերտավորման աճումը: Ստրկությունը: Տոհմային արիստոկրատիան: Պայքար ավարների ու ֆրանկների դեմ: Ցեղերի մորավյան միությունը և նրա պայքարը Գերմանիայի դեմ: Բյուզանդական ու գերմանական ազդեցությունը Մորավիայում. Կիրիլ ու Մեֆոդի. քրիստոնեության ընդունելը: Մորավական միության կազմալուծումը: Արևելյան Մորավիայի նվաճումը հունգարների կողմից:



## 10. Ֆեոդալական Ֆրանսիան IX—XI դարերում

Արտադրողական ուժերի զարգացման մակարդակը: Արտադրության ֆեոդալական բնույթը: Խոշոր հողատիրությունը և անմիջական արտադրողների մանր արտադրությունը: Արտադրության նատուրալ բնույթը: Ֆեոդալական սեփականությունը և ֆեոդալական ռենտան: Սենիորյան ու նրա կազմակերպումը. ֆեոդալական կուրիան: Ֆեոդալական դղյակը: Ֆեոդալական պատերազմները: Կալվածքը և համայնքը: Ճորտական գյուղն ու ճորտական գյուղացիությունը: Գյուղացիության դրությունն ու գյուղացիական ապստամբությունները: Ֆեոդալական հիերարխիան ու ֆեոդալական պետությունը:

Ֆեոդալիզմի ծագման բուրժուական թեորիաներն ու այդ թեորիաների քննադատությունը: Գերմանիստներն ու ռոմանիստները: Մաուրերի թեորիան: Ֆյուստել-դը-Կուլանժի և Դոպշի թեորիաները: Ֆեոդալիզմի ըմբռնումը բուրժուական պատմագրության մեջ: Դոպշի, Պետրուշևսկու և մյուսների հայացքների քննադատությունը: Ֆաշիզմի «Թեորիան» և դրանց կեղծարարական բնույթի մերկացումը:

## 11. V—XI դարերի Բյուզանդիան յեվ հարավային սլավոնները

Ֆեոդալիզմի զարգացման առանձնահատկությունները Արևելյան Հռոմեական կայսրության մեջ: Առևտուրն ու արդյունաբերությունը: Ֆեոդալականացման դանդաղ տեմպը: Բյուզանդիան վորպես ռեակցիայի պատվար:

Բյուզանդիան Հուստինիանոսի ժամանակ։ Վանդալների, գոթերի, պարսիկների դեմ մղած պատերազմները։ Հուստինիանոսի օրենսդրությունը։ Պայքար սենատորական հողատիրության դեմ։ Քաղաքական պայքարը մայրաքաղաքում։ Կրկեսի կուսակցությունները։ «Նիկա»-ի ապստամբությունը։

Բյուզանդիոնի ճգնաժամը Հուստինիանոսից հետո։ Բյուզանդիոնի թուլացումը Հերակլի օրոք պարսիկների դեմ մղած պատերազմների հետևանքով։ Արաբներն ու նրանց նվաճումները։ Կայսրների պայքարը յեկեղեցական հողատիրության աճման դեմ և պատկերամարտությունը վորպես այդ պայքարի գաղափարախոսական արտահայտություն։ Լևոն III-ի և նրա հաջորդների օրենսդրությունը։ Վանքապատկան հողերի բռնագրավումը և այդ հողերը գահի ծառայողներին ցմահ օգտագործման համար բաշխելը (խարիստիկանիկ)։ Բարբարոսների ռազմա-վարչական բնակավայրերը (ստրատիոտներ)։ VI—VIII դարերի սլավոնական եմիգրացիան և հողատիրության համայնքային ձևերի վերածնությունը։

Ռեակցիայի հաղթանակն ուղղափառությունը պաշտպանելու լոզունգի տակ և խոշոր հողատիրության ուժեղացումը։ Թովմաս Սլավոնացու գյուղացիական ապստամբությունը Փոքր Ասիայում։

Բյուզանդիոնն ու սլավոնները։ Բուլղարական թագավորությունը։ Քրիստոնեության տարածումը սլավոնների մեջ։

Բյուզանդիան IX—XI դարերի վերջերքից սկսած։ Մակեդոնական դինաստիան։ Առևտրի աճումը և կառավարական միջոցների ուժեղացումը։ Բուլղարական թագավորություն, ռուսների (Սվյատոսլավ) և արաբների դեմ մղած պայքարի հաջողությունները։ Նիկիֆոր Փոկաս։ Հովհան Զմշկիկ։ Վասիլ II Բուլղարասպանը։ Պայքար խոշոր հողատիրության դեմ և ռազմական շինականների (ստրատիոտների) պաշտպանությունը։ Բյուզանդական կայսրության պետական կառուցվածքը։

Կոմնենների դինաստիան վորպես խոշոր ֆեոդալների շահերի ներկայացուցիչը։ Պրոնիաների սիստեմի և ֆեոդալական ապակենտրոնացման աճումը։ Առևտրի անկումը։ Բյուզանդիոնի կորուստները թյուրքերի և նորմանների դեմ մղած պայքարում։



## 12. Արաբները VI—XI դարերում

Նախամուսուլմանական Արաբիայի հասարակական կարգերը։ Քոչվոր և նստակյաց բնակչությունը։ Տոհմի քայքայումը և ստրկատիրության զարգացումը։ Արաբական առևտուրը։ Քաղաքներն ու դասակարգային պայքարը նրանց ներսում։ Մուհամեդն ու իսլամի ծագումը։ Ղուրանը։ Արաբների միացումը և առաջին խալիֆաների նվաճումները։ Ոմայյանների Դամասկոսի խալիֆաթը և արաբների տիրապետության հետագա տարածումը արևելքում և արևմուտքում։ Պետության կազմակերպումը՝ տուրքեր և ռազմական կառուցվածքը։ Դասակարգային պայքարը և աղանդավորության առաջացումը։

Աբասյանների Բաղդադի խալիֆայությունը։ Տնտեսական զարգացումը և ֆեոդալիզմի ամրապնդումը։ Գյուղացիության ճորտացումը և զանջերի ու նայմանների գյուղացիական հեղափոխական շարժումները։ Արդյունաբերությունն ու առևտուրը։ Հարուն-ալ-Ռաշիդ և Ալ-Մամուն։ Ֆաթիմյանների յեգիպտական խալիֆայության առաջացումը։ Ինքնուրույն մարզերի առանձնացումը X դարում։ Թյուրք-սելջուկները։ Սասանինները։

Կորդովայի խալիֆայությունը և նրա պատմության հիմնական փաստերը։

Արաբական կուլտուրան, գիտությունը և արվեստը։ Արաբների դերը յեվրոպական կուլտուրայի զարգացման գործում։

### ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

# ԱՐԵՎՄՏՅԱՆ ՅԵՎՐՈՊԱՆ XI—XV ԴԱՐԵՐՈՒՄ

## 1. Արևմտյան Յեվրոպայի տնտեսական զարգացումը XI դարի վերջերին յեվ քաղաքների առաջացումը

Արհեստագործության անջատումը գյուղատնտեսությունից և քաղաքների՝ վորպես արհեստագործական և առևտրական կենտրոնների՝ առաջացումը։ Աշխատանքի բաժանումը քաղաքի և գյուղի միջև։ Քաղաքային շուկայի կազմվելը։ Քաղաքների ծագման կարևորագույն թեորիաներն ու նրանց քննադատությունը։

Առևտրի զարգացումը։ Եվրոպայի կապերը Արևելքի հետ և Միջերկրական ծովի ավազանը։ Իտալական առևտրական քաղաքները։ Գաղութացումը։ Փոփոխություններ գյուղացիության ու ազնվականության դրության մեջ։

## 2. Խաչակրաց առաջին արշավանքը

Խաչակրաց արշավանքների ընդհանուր պատճառները։ Թյուրք-սելջուկները Փոքր Ասիայում։ Բյուզանդիոնը խաչակրաց արշավանքների նախօրյակին։ Կլերմոնի ժողովը։ Խաչակրաց առաջին արշավանքը։ Գյուղացիական աշխարհազորը։ Ասպետական աշխարհազորը։ Երուսաղեմի առումը։ Երուսաղեմի թագավորությունը և նրա կառուցվածքը։ Երուսաղեմի ասիզները։ Հոգևոր-ասպետական օրդենները։ Տեղական բնակչության դրությունը։ Իտալական քաղաքների նվաճումներն Արևելքում։

## 3. Խաչակրաց հետագա արշավանքները

Խաչակիրների կորուստներն Արևելքում։ Բերնարդոս Կլերվոյցի։ Խաչակրաց երկրորդ արշավանքը և նրա անհաջողությունը։ Սալահեդինի պետությունը։ Երուսաղեմի առումը նրա կողմից։

Խաչակրաց երրորդ արշավանքը։ Չորրորդ արշավանքը և Վենետիկի դերը դրանում։ Խաչակիրները Բյուզանդիայում։ Լատինական կայսրության հիմնումը։ Նիկեյան և Տրապիզոնյան միապետությունները։ Չինգիզ խանի պետությունը։ Մոնղոլական արշավանքներն ու քաղաքական փոփոխություններ Արևելքում։ Խաչակրաց հետագա արշավանքների անհաջողությունը և նրանց դադարեցման պատճառները։ Խաչակիրների տիրապետությունների վախճանն Արևելքում։

Խաչակրաց արշավանքների հետևանքները։ Առևտրական կապերի ամրապնդումը Արևելքի հետ։ Իտալական քաղաքների բարձրացումը։ Արևելյան կուլտուրայի ազդեցությունը։ Պահանջի աճումը։ Արտադրության նոր ճյուղերը։

## 4. Ֆեոդալական քաղաքները

Քաղաքների պայքարը ֆեոդալական սենյորների դեմ։ Ինքնուրույն և կախյալ քաղաքները։ Քաղաքային արիստոկրա-



տիան։ Քաղաքային վարչությունը։ Ֆեոդալական քաղաքի կենցաղը։

Համքարությունների առաջացումը։ Համքարությունների ծագման թեորիաները։ Համքարությունների կառուցվածքն ու նրանց նպատակը։ Վարպետները, ենթավարպետներն ու աշակերտները։ Համքարային կանոնադրությունները։ Համքարային արհեստն ու նրա տեխնիկան։

Արհեստն ու շուկան։ Քաղաքային տնտեսության Բյուխերյան թեորիան և նրա քննադատությունը։ Առևտուրն ու վարկը։ Առևտրի զարգացումը XII—XIII դարերում։ Եվրոպական առևտրի գլխավոր ճանապարհները։

Միջերկրական ծովի և հյուսիսային առևտուրը։ Տոնավաճառները Շամպանում։ Տեղական տոնավաճառները։ Վաճառականությունը։ Վաճառականական գիլդիաները։ Վաշխառությունը։ Հյուսիսային-իտալական բանկիրներ։ Եկեղեցին և վաշխառությունը։

Քաղաքի աճման ազդեցությունը գյուղի վրա։ Գյուղատնտեսության արտադրանքների առևտրի զարգացումը։ Ֆեոդալական ճնշման ուժեղացումը։ Փողային ռենտայի զարգացումը և այդ զարգացման հետևանքները գյուղացիության համար։

## 5. Կայսրությունն ու պապությունը XI—XIII դարերում

Գերմանիայի սոցիալ-տնտեսական դրությունը XI դարի կեսերին։ Առևտրի և քաղաքների զարգացումը. հռենոսյան քաղաքներն ու նրանց պայքարը եպիսկոպոսների դեմ. ճորտատիրական հարաբերությունների զարգացման ավարտումը և ֆեոդալական ճնշման ուժեղացումը։ Ֆեոդալական հիերարխիայի ձևավորումը. Կենտրոնական իշխանության անկումը Հենրիխ III-ից հետո։ Ֆեոդալական ավագանիների ապստամբությունը Հենրիխ IV-ի դեմ. սաքսոնական գյուղացիության ապստամբությունը (1074—1075) թ. թ.։

Պապական իշխանության աճումը։ Կլյունյան շարժումը, պայքար սիմոնիականության և նիկոլաիտության դեմ։ Գրիգոր VII-ը և նրա ռեֆորմները։ Պատարիա։ Գրիգոր VII-ի կողմից Գերմանիայում տեղի ունեցող ներքին պայքարի օգտա-

գործումը։ Ինվեստիտուրայի մասին տեղի ունեցող վեճը Հենրիխ IV-ի և Հենրիխ V-ի ժամանակ։ Վորմսի կոնկորդատը (1122)։ Պոլաբյան Սլավոնների դեմ ուժեղ հարձակում սկսելը։ Վելֆերի բարձրացումը և սրանց պայքարը Շտաուֆենների դեմ։ Ֆրիդրիխ Բարբարոսսան և նրա պայքարը ֆեոդալական ազնվականության դեմ։ Կայսերական ապետությունը վորպես Շտաուֆենների իշխանության հենարան։ Շտաուֆենների իտալական քաղաքականությունը։ XII—XIII դարերի հյուսիսային-իտալական քաղաքները։ Պապական իշխանության ուժեղացումը։ Բարբարոսսայի իտալական արշավանքը։ Պայքար պապերի ու լոմբարդական քաղաքների դեմ։ Ռոնկալյան սեյմը։ Միլանի առումը։ Ալեքսանդր III պապը։ Լոմբարդական միությունը։ Լենյանայի կռիվը։ Գվելֆերը։ Գիբելլիններ։

Իննովկենտիոս III։ Պապական կուրիա։ Պապական գանձարանի յեկամուտները։ Պապական թեոկրատիան (աստվածապետությունը)։ Պայքար աշխարհիկ իշխանության համար Իտալիայում։ Շտաուֆենների Սիցիլիական թագավորությունը և նրա կուլտուրան։ Ֆրիդրիխ II-ի քաղաքականությունը Գերմանիայում և նրա զիջումները իշխաններին։ Պայքար պապականության դեմ և Շտաուֆենների կործանումը։

## 6. Անգլիան XI—XII դարերում

Նորմանդական նվաճումը և նրա ազդեցությունը ֆեոդալիզմի զարգացման վրա Անգլիայում։ Վիլհելմ Նվաճողը և թագավորական իշխանության ուժեղացումը։ Ավատական սիստեմի յուրահատկությունն Անգլիայում։ Ծառայողական հարաբերությունների տարածումը։ Ահեղ դատաստանի գիրքը։ Թագավորն ու յեկեղեցին։ Թագավորական իշխանությունն ու ֆեոդալները Վիլհելմ Նվաճողի հաջորդների օրով։ Ֆեոդալական պատերազմները։

Հենրիխ II և պլանտագենետների Դինաստիան։ Պլանտագենետների տիրապետությունները Ֆրանսիայում. Հենրիխ II-ի դատական և ռազմական ռեֆորմները։ Կենտրոնական և տեղական վարչությունը։ Փոխհարաբերությունները յեկեղեցու հետ։ Թոմաս Բեկետը։

Քաղաքների և առևտրի աճումը։ Ճորտ գյուղացիության շահագործման ուժեղացումը։ Ռիչարդ Առյուծասիրտ։



## 7. Ազատությունների մեծ խարտիան յեվ պարլամենտի սկիզբը

Հովհաննես Անհողը և նրա անհաջողությունները Ֆրանսիայի դեմ մղած պատերազմում։ Ընդհարում պապի հետ։ Բարոնների, ասպետության և քաղաքների յելույթը թագավորի դեմ։ Ազատությունների մեծ խարտիան։ Հենրիխ III։ Բարոնական օլիգարխիա սահմանելու փորձերը։ Ասպետների ու քաղաքացիների յելույթը։ Քաղաքացիական պատերազմը։ Պարլամենտի առաջացումը։ Եդուարդ I և թագավորի ու ֆեոդալների միջև կայացած համաձայնությունը։ Եդուարդ I-ի պատերազմները։

Պարլամենտի դասակարգային բնույթը և նրա քաղաքականությունը։ Դասային միապետության սոցիալական եյությունը։

Եդուարդ II։ Անգլիական առևտրի զարգացումը։ Բրդի արտադրությունը։ Ֆլանդրիայի դերն անգլիական առևտրի մեջ։ Հարյուրամյա պատերազմի սկիզբը և անգլիացիների հաջողությունները։ Պարլամենտի ուժեղացումը և նրա կառուցվածքը։

## 8. Ուոտ Տայլերի ապստամբությունը. Լանկաստերներ յեվ Իորկեր

Բրդի արդյունաբերության ավելացումը։ Անգլիական արդյունաբերության աճումը։ Գյուղատնտեսության ապրանքայնության զարգացումը։ XIII—XIV դարերի անգլիական մանորը։ Գյուղացիական պարտույթների կոմմուտացիայի պրոցեսը և համայնական հողերի զավթումը։ Սև մահը։ Եդուարդ III-ի և Ռիչարդ II-ի բանվորական օրենսդրությունը։

Ֆեոդալական ռեակցիա։ Հուզումներ գյուղացիների և քաղաքային չքավորության մեջ։ Քաղաքացիների օպոզիցիան։ Վիկլեֆի քարոզը. լոլլարդները։ Ջոն Բոլլը։ Անգլիացիների անհաջողությունները Հարյուրամյա պատերազմի մեջ և գլխահարկի գանձումը։ 1381 թ. գյուղացիական ապստամբությունը։ Քաղաքային բնակչության մասնակցությունն այս ապստամբության մեջ։ Ապստամբված գյուղացիների տակտիկան ու ծրագիրը՝

Ապստամբության ճնշումը և անհաջողության պատճառները։ Անգլիական գյուղի հետագա զարգացումը։ 1381 թ. ապստամբությունը պատմական գրականության մեջ։ Մարքսը, Էնգելսը, Լենինը և Ստալինը գյուղացիական պատերազմների մասին։

Հենրիխ IV և Լանկաստրների դինաստիան։ Ֆրանսիայի դեմ ուղղված արշավանքների վերսկսումը և անգլիացիների հաջողությունները Հենրիխ V-ի ժամանակ։

Հենրիխ VI։ Անգլիական խառնակությունները և Ֆրանսիայում ձեռք բերած նվաճումների կորուստը։ Կեդի ապստամբությունը։ Հարյուրամյա պատերազմի վախճանը։ Կարմիր և Սպիտակ վարդերի պատերազմը և թագավորական իշխանության ուժեղացումը։

Յորկների դինաստիան։ Ռիչարդ III։ Թյուդորների դինաստիայի սկիզբը։

## 9. Ֆրանսիան XII—XIII դարերում

Կապետինգյան ֆեոդալական պետությունը Ֆրանսիայի տերիտորիայում։ Թագավորական իշխանության թուլությունը և ֆեոդալների ինքնուրույնությունը։ Թագավորների դաշինքը յեկեղեցու հետ։ Գյուղացիության դրությունը։ Քաղաքների աճումը ֆեոդալների դեմ մղած պայքարի ընթացքում։ Կոմունալ շարժումը հյուսիսային Ֆրանսիայում և Ֆլանդրիայում։ Քաղաքային խարտիաները։ Թագավորական իշխանության ուժեղացումը։ Լյուդովիկոս VI։ Թագավորական դոմենում մանր ֆեոդալների դեմ մղած պայքարը։

Պայքար խոշոր ֆեոդալների դեմ։ Վանահայր Սուգերիուսը։ Լյուդովիկոս VII։

Փիլիպպոս II Օգոստոսը և նրա պայքարը պլանտագենետների դեմ։ Նորմանդիայի և Լուարայի ավազանի հողերի միացումը։ Թագավորական տիրապետությունների վարչական նոր կառուցվածքը։ Ալբիգոյանների դեմ ուղղված խաչակրաց արշավանքը։ Լյուդովիկոս VIII և Լանգեդոկի միացումը։ Լյուդովիկոս IX։ Պայքար ֆեոդալների դեմ։ Դատական ռեֆորմը։ Պարլամենտը։ Լեգիստները։



## 10. Գլխավոր շտատները։ Էտյեն Մարսելի ապստամբությունը յեվ Ժակերիան

Փիլիպպ IV։ Շամպանի միացումը։ Պայքար Ֆլանդրիայի համար։ Ֆինանսական դժվարությունները։ Ընդհարում յեկեղեցու հետ և պապի վրա տարած հաղթանակը։ Տաճարականների պրոցեսը։ Գլխավոր շտատների առաջացումը, նրանց կազմը և կոմպետենցիան։ Փիլիպպ IV-ի վորդիները և պայքար ֆեոդալների դեմ։ Գյուղացիների հարկադրական փրկավճարով պարտավորություններից ազատվելը թագավորական կալվածներում։

Վալուաների դինաստիայի սկիզբը։ Կրեսիյի ու Պուատյեի մոտ կրած պարտությունները։ 1356 թ. Գլխավոր շտատները։ Մարսելի մեծ օրդոնանսը։ Էտյեն Մարսել և Փարիզի ապստամբությունը։ Գյուղացիական ապստամբություններ (Ժակերիան)։ Քաղաքային և գյուղացիական շարժումների կապը։ Ժակերիայի ու Փարիզի ապստամբության ճնշումը։

6186 39

## 11. Ֆրանսիան XIV—XV դարերում

Կարլոս V և նրա ռեֆորմները։ Նոտաբլների ժողովը։ Անգլիայի դեմ մղվող պատերազմի հաջողությունը։ Թագավորության բաժանվելը բաժնեկալվածների (удел)։ Բուրգունդիայի դաշինքը Անգլիայի հետ։ Կաբոշի ապստամբությունը։ Անգլիայի կողմից հյուսիսային Ֆրանսիայի գրավումը։ Կարլոս VII։ Ժաննա դ'Արկ։ Ֆրանսիայի հաջողությունները։ Մշտական բանակը և մշտական հարկերը։ Գլխավոր շտատների նշանակության անկումը։ Բանկիրներն ու վաճառականները ֆինանսական վարչության մեջ։

Լյուդովիկոս XI։ Արդյունաբերական և առևտրական քաղաքականությունը։ Թագավորական տիրապետությունների նոր ընդարձակումը։ Պայքար բուրգունդյան հերցոգ Կարլոս Խիզախի դեմ։ Բուրգունդիայի բաժանումը։ Ֆրանսիայի քաղաքական միավորման ավարտումը։

## 12. Գերմանիան XI–XIV դարերում և արևմտյան սլավոնները

*Պոլաբյան սլավոնների հասարակական կարգերը XI–XII դարերում։ Բոդրիչյան իշխանների դաշինքը սաքսոնական ֆեոդալների հետ։ Բոդրիչների մասսայի պայքարը ընդդեմ իշխանների և գերմանական ազդեցության։ 1066 թ. ապստամբությունը։ Կրուտոն և հեթանոսության վերականգնումը բոդրիչների մոտ։ Սաքսոնական ֆեոդալների կողմից պոլաբյան սլավոնների դեմ սկսած հարձակման ուժեղացումը XII դարում։ Հենրիխ Առյուծը և Ալբրեխտ Արջը։ Բոդրիչների, լյուտիչների և պոմորյանների հողերի նվաճումը։ Գերմանական գաղութացումը, գերմանացիների կողմից սլավոններին սոցիալապես ու կուլտուրապես ստրկացումը։ Գերմանական ֆեոդալների էքսպանսիան դեպի Մերձբալթյան յերկրները։*

*Սուսերակիրների օրդենը, Տևտոնների օրդենը և սրանց միավորումը։ Չուդ լճի ճակատամարտը և գերմանացիների դեպի արևելք առաջխաղացման կանգ առնելը։ Մերձդանուբյան յերկրների գաղութացումը։ Ավստրիական մարկան։ Գերմանական կոլոնիստները Հունգարիայում, Չեխիայում և Լեհաստանում։*

*Քաղաքների զարգացումը Գերմանիայում և դասակարգային պայքարը քաղաքներում։ Քաղաքների միությունները։ Հյուսիսային առևտուրն ու Հանզայի միությունը։ Պայքար Դանիայի դեմ։ Հանզայի կառուցվածքը։ Իշխանների պայքարը քաղաքների դեմ։*

*Գյուղացիների դրությունը XIII–XIV դարերում և XV դարի առաջին կեսում։ Ճորտային կախման թուլացումը։ Փողային ռենտայի աճումը և գյուղացիության շերտավորումը։*

*Կայսերական իշխանության անկումը Շտաուֆեններից հետո։ Միջթագավորությունը։ Հռենոսյան միությունը։ Ռուդոլֆ Հաբսբուրգցու ընտրությունը։ Կայսրության կառուցվածքը։ Կուրֆյուրստների (կայսրընտիր իշխաններ) կոլեգիան։ Ռայխստագը և նրա կազմը։ Աշխարհիկ և հոգևոր իշխանները։ Կայսերական ասպետները։ Կայսերական քաղաքները։ Հաբսբուրգների քաղաքականությունը կայսրության մեջ և Ավստրիայում։*

*Շվեյցարական միության կազմակերպումը։ Լյուքսեմբուրգները։ Կարլոս IV և Ոսկե Բուլլան (հրովարտակ)։*



*Կենտրոնական իշխանության վերջնական անկումը Գերմանիայում Ֆրիդրիխ III-ի օրով։*

## 13. Իտալիան ու պապությունը XIII–XV դարերում

*Իտալիայի տնտեսական զարգացումը Միջերկրական ծովի առևտրի աճման կապակցությամբ։ Իտալիայի մասնատվածությունը։ Հարավային Իտալիան և Սիցիլիան։ Պապական մարզը։ Հռոմեական հանրապետությունը (Կոլա դի Ռիենցի)։ Հյուսիսի քաղաքային հանրապետությունները։ Հարավային ու Հյուսիսային Իտալիայի գյուղացիությունը։ Գյուղացիական շարժումները (Դոլչինոյի ապստամբությունը)։*

*Վենետիկը և Ջենովան։ Նրանց առևտրական մրցակցությունը։ Վենետիկի պետական կառուցվածքը։ Տասի խորհուրդը։ Վենետիկի դիվանագիտությունը։*

*Ֆլորենցիան։ Առևտրական ու բանկային գործերը։ Ֆլորենցիայի արդյունաբերական զարգացումը։ Առևտրական և վաշխառուական կապիտալը արդյունաբերության մեջ։ Ավագ և կրտսեր համքարությունները։ Արտահամքարային բանվորները։ Քաղաքային կարգերն ու սոցիալական պայքարը։ Չոմպիյի ապստամբությունը։ Մեդիչիների բանկիրային տունը։ Մեդիչիների բռնապետությունը։ Սոցիալական պայքարն ու բռնապետությունն իտալական հանրապետություններում։ Կոնդոտյերները։ Սֆորցան Միլանում։*

*Պապականության անկումը։ Պապերի բաբելոնյան գերությունն Ավինյոնում։ Մեծ պառակտումը։ Յեկեղեցական ռեֆորմների փորձերը։ Ռիզայի, Կոնստանցայի և Բազելի ժողովները։ Ֆլորենցիայի ունիան։ Կաթոլիկ յեկեղեցու անկումը։*

## 14. Իսպանիան և Պորտուգալիան

*Կորդովայի խալիֆայությունն ու «ռեկոնկիստան»։ «Ռեկոնկիստան» և հոգևորականությունը։ Հոգևոր-ասպետական օրդենները։ Պիրենյան թերակղզու պետություններն ու նրանց զարգացման յուրահատկությունը։ Արագոնը։ Արագոնի ազնվականության ազատությունները և գյուղացիության ծանր վի-*

ձնկը։ Կատալոնիայի քաղաքները։ Արագոնիայի ծովային հզորությունը։ Լեոն և Կաստիլիա։ Կաստիլիայի քաղաքներն ու քաղաքային միությունները։ (Հերմանդադներ)։ Գյուղացիական ազատ համայնքները։ Գյուղատնտեսությունը։ Ոչխարաբուծության զարգացումը։

Պորտուգալիան։ Պորտուգալիայի քաղաքներն ու ծովային առևտրի զարգացումը։ Պիրենյան թերակղզու պետությունների թագավորական իշխանությունը և կորտեսները։ Թագավորական իշխանության ուժեղացումը։ Իսպանիայի միավորումը Ֆերդինանդի և Իզաբելլայի օրոք։ Ինկվիզիցիան։ Գյուղացիական ապստամբությունները։ Գրենադայի նվաճումը։

## 15. Սկանդինավյան յերկրները X—XV դարերում

Տոհմային կարգերի քայքայումը Սկանդինավյան յերկրներում։ Թագավորական իշխանության բարձրացման սկիզբը։ Քրիստոնեության տարածումը Դանիայում, Շվեդիայում և Նորվեգիայում։ Յեկեղեցական և աշխարհիկ խոշոր հողատիրության աճումը։ Ֆեոդալների կողմից գյուղացիությունը ճորտացնելու փորձերը։ Գյուղացիական ապստամբությունները Նորվեգիայում ու Դանիայում, նրանց ազդեցությունը գյուղացիության վիճակի վրա և այս յերկրների քաղաքական կարգերը։ Վալդեմար IV Դանիացին, աղնվականության վրա տարած հաղթանակը, պայքար Հանզայի դեմ։ Կալմարյան ունիան։ Շվեդիայի պայքարն անկախության համար։ «Ստոկհոլմի արյունալի սպանդը» և դանիացիների վտարումը Շվեդիայից։

## 16. Չեխիան XI—XIV դարերում

Ներքին պայքարը Չեխիայում XI—XII դարերում։ Այս պայքարի օգտագործումը գերմանական ֆեոդալների կողմից։ Բրատիսլավ II և թագավորական տիտղոսի ընդունումը։ Ֆեոդալական հարաբերությունների զարգացումը XI—XII դարերում, խոշոր հողատիրության աճումը և ազատ գյուղացիության յենթարկվելը ֆեոդալներին։ Հոգևորականությունը վորպես գերմանական ազդեցության տարածիչ։ Ֆեոդալիզմի ձևավորումը Չե-



խիայում և գերմանական ազդեցության դերը այս պրոցեսում։ Փշեմիսլ I և Վացլավ I։ Գերմանական գաղութացումը և նրա ազդեցությունը չեխական գյուղացիության դրության վրա։ Դասակարգային հակասությունների աճումը քաղաքում և գյուղում։ Հերձվածների զարգացումը և ինկվիզիցիայի սահմանումը Չեխիայում։ Փշեմիսլ II-ը, նրա ներքին և արտաքին քաղաքականությունը։ Լյուքսեմբուրգների հաստատվելը Չեխիայում։ Կարլոս IV-ը, նրա ներքին քաղաքականությունը։ Պրագայի համալսարանի հիմնադրումը։

## 17. Հուսյան պատերազմները

Սոցիալական հակասությունները Չեխիայում XV դարի սկզբին։ Կաթոլիկ յեկեղեցու և գերմանական բռնության դեմ ուղղված օպոզիցիան։ Ռեֆորմացիոն գաղափարների զարգացումը։ Յան Հուսը։ Կոնստանցի ժողովն ու Հուսի մահապատիժը։ Չեխական աղնվականության խնդրագիրը։ Սկիհականների և թաբորականների կուսակցությունների ձևավորումը։ Գյուղացիական ապստամբության սկիզբը։ Ապստամբությունը Պրագայում 1419 թ.։ Առաջին «խաչակրաց արշավանքը» հուսյանների դեմ։ Յան Ժիշկան և «խաչակիրների զորքի» պարտությունը։ Հեղափոխական վերելքի աճումը։ Ադամականները։ Չափավոր ռեֆորմի կողմնակիցների համախմբումը մասսաների հեղափոխական շարժման դեմ, Մարտին Գուսկիյի և Պրոկոպիոս Միականու մահապատիժը, հաշվեհարդար ադամականների հետ։ Յերկրորդ «խաչակրաց արշավանքը», հուսյանների հաղթանակը։ Պրագայի համաձայնությունը։ Թաբորականների ապստամբությունը և նրա ջախջախումը։ Սիգիզմունդի գահ բարձրանալը։ Գյուղացիության պարտության պատճառները և այդ պարտության ազդեցությունը գյուղացիների դրության վրա։ Չեխիայի միացումը Հաբսբուրգների տիրապետություններին։

## 18. Լեհաստանը X—XV դարերում

Տոհմային կարգի քայքայումը Լեհաստանում և Պյաստերի կնյազական իշխանության կազմակերպումը։ Լեհաստանը Բոլեսլավ Արիասրտի ժամանակ (992—1025), խոշոր հողատիրության

աճումը, մասսաների բռնի քրիստոնեացումը, ազատ գյուղացիության հպատակեցման սկիզբը։ Գյուղացիների ապստամբությունը։ Կենտրոնական իշխանության անկումը Բոլեսլավ III-ից հետո։ «Մնոգովլադստվո»։ Թաթարական արշավանքները։ Գերմանական գաղութացումը։ Կազիմիր III, թագավորական իշխանության ուժեղացումը շլյախտայի աջակցությամբ։ Ունիան Լիտվայի հետ։ Պայքար գերմանացիների դեմ։ Գրյունվալդի ճակատամարտը և Տորնի հաշտությունը։ Լեհաստանը Կազիմիր IV-ի օրոք։ Նեշավյան ստատուտը և շլյախտայի գերիշխանության սկիզբը։ Քաղաքացիների ու գյուղացիների նյութական և իրավական դրությունը։

## 19. Հունգարիան ու բալկանական յերկրները

Հունգարական թագավորության կազմակերպումը։ Ստեֆան I, յերկրի քրիստոնեացման և ֆեոդալական հարաբերությունների զարգացման սկիզբը։ Ժողովրդական մասսաների ապստամբությունը Պետրոս թագավորի և գերմանական ազդեցության դեմ (1041—1044)։ Ֆեոդալական հարաբերությունների զարգացումը Անդրեյ I Արպադի և նրա հաջորդների ժամանակ։ Ֆեոդալական ազնվականության ուժեղացումը, Անդրեյ II-ի «Ոսկե բուլլան» (1222)։ Թաթարական արշավանքները և գերմանական գաղութացումը։ Հունգարիան Անժույնների դինաստիայի ժամանակ։ Պայքար թյուրքերի դեմ։ Մատվեյ Կորվին։ Արևելյան Հունգարիայի գրավումը թյուրքերի և արևմտյանինը՝ Հաբսբուրգների կողմից։

Բուլղարիայի և Սերբիայի ազատագրումը Բյուզանդիոնի իշխանությունից։ Բուլղարական թագավորությունը, բուլղարների հաջող պայքարը լատինական կայսրության դեմ։ Բուլղարիան Ասեն II-ի օրոք (1218—1241)։ Սերբիան Ստեֆան Դուշանի օրով։ Ստեֆան Դուշանի օրենսգիրքը (1349)։ Թյուրքերի նվաճումները Բալկաններում։ Կոստանդնուպոլսի գրավումը թյուրքերի կողմից։



## 20. Միջնադարյան կուլտուրան յեվ բուրժուական գաղափարախոսության սաղմնավորումը

Յեկեղեցին ու կուլտուրան միջին դարերում։ Յեկեղեցական հիմնարկությունները։ Ասկետիզմը։ Յեկեղեցին և դպրոցը։ Համալսարանները։ Միջնադարյան փիլիսոփայությունը։ Սխոլաստիկան։ Նոմինալիստներն ու ռեալիստները։ Միստիկան։ Աբելյար և Բեռնարդոս Կլերվոյեցի։ Թովմաս Աքվինացին։ Ռոժեր Բեկոն։

Հերետիկոսությունը։ Միջնադարյան աղանդների սոցիալական հիմքը։ Ընդհանուր միջնադարյան հերետիկոսությունների տիպերի մասին։ Կատարները։ Վալդենսները։ Ալբիգոյանները։ Պայքար հերետիկոսությունների դեմ։ Մուրացիկ օրդենները։ Ինկվիզիցիան։ Կախարդների դատավարությունները։ Կոմունիստական աղանդները։

Միջնադարյան արվեստն ու գրականությունը։ Արվեստը յեկեղեցու սպասավորի դերում։ Գոթական ճարտարապետությունը։ Քանդակագործությունն ու նկարչությունը։ Յեկեղեցական գրականություն։ Միստերիաները։ Ասպետական գրականությունը։ Եպոս։ Յերգ Ռոլանդի մասին։ Նիբելունգները։ Քնարերգություն։ Տրուբադուրներ և միննեզինգերներ։ Դանտեյի «Աստվածային կատակերգությունը»։

